«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ընտանիքի հոգեբանություն. կոնֆլիկտներ*

Առարկան՝ *Անգլերեն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Բաբոյան Բիայնա Շաքրոյի*

Ուսումնական հաստատություն՝ *Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱ.....5

1.1 Ընտանիք հասկացությունը և երիտասարդ ընտանիքի ընդհանուր բնութագրիչները.....5

1.2 Ընտանեկան հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները.....12

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ընտանիքը բավականին բարդ, բազմակողմանի ու բազմաբնույթ ինստիտուտ է: Դեռ վաղ ժամանակներից ընտանիքը եղել է պատմիչների ու փիլիսոփաների աշխատությունների ուսումնասիրության կենտրոնում: Արդեն ուշ միջնադարյան շրջանում այն աստիճանաբար հանձնվել է բժշկության և հոգեբանության ոլորտներում աշխատող մասնագետներին: Հետագայում արդեն առաջ եկան տարբեր գիտություններ և մասնագիտություններ, որոնց հիմնական խնդիրն ընտանեկան հոգեբանության հետազոտումն ու ընտանիքում կոնֆլիկտներ առաջացնող խնդիրների, պատճառների բացահայտումն էր: Թեմայի արդիականությունը պայմանավորված է մեր օրերում մեծ կարևորություն ձեռք բերող ընտանեկան խնդիրների և դրանց կարգավորման համար համալիր արդյունավետ մոտեցումների ցուցաբերման անհրաժեշտության հետ:

Հետազոտության նպատակն ընտանիքի հոգեբանության բազմակողմանի ուսումնասիրումն է: Վերոնշյալ նպատակն իրականացնելու համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել ընտանիք հասկացությունը և դրա վերաբերյալ արված գիտական մեկնաբանությունները;
- ներկայացնել երիտասարդ ընտանիքի ընդհանուր բնութագիրն ու առավել հաճախ հանդիպող խնդիրները, որոնց հետ բախվում են վերջիններս;
- ներկայացնել ընտանեկան կոնֆլիկտների հետևանքների մեր հետազոտության արդյունքները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Աշխատանքի հետազոտության օբյեկտ է հանդիսանում ընտանիքի հոգեբանությունը, իսկ առարկան՝ ընտանեկան կոնֆլիկտները, դրանք հարուցող գործոնները, ինչպես նաև ընտանեկան կոնֆլիկտների կարգավորման սոցիալ-հոգեբանական միջոցները:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և

առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 25 էջ:

Աշխատանքի առաջին գլխում («Ընտանիքը որպես հոգեբանության հետազոտման առարկա») ներկայացվել է «ընտանիք» հասկացության էությունը, երիտասարդ ընտանիքի ընդհանուր բնութագրիչները, ընտանեկան հիմնախնդիրներն ու դրանց առաջացման դրդապատճառները: Երկրորդ գլխում («Ընտանեկան կոնֆլիկտների հետազոտման մեր փորձից») ներկայացվել են Նորք Մարաշի ՍԱՏԲ-ում հաշվառված ընտանիքի հետ անցկացրած սոցիալ-հոգեբանական հետազատության արդյունքները:

Գրականության տեսություն: Աշխատանքի տեսական հատվածի շարադրման համար տեղեկությունների կարևոր աղբյուր են հանդիսացել ինչպես հայ, այնպես էլ արտասահմանցի հեղինակների, մանկավարժների, հոգեբանների և սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագետների աշխատությունները: Դրանց միջից հատուկ կառանձնացնենք Է. Գիդդենսի, Լ. Շնեյդերի, Ե. Չեռնյակի, Մ. Գաբրիելյանի, Գ. Թադևոսյանի, Յու. Գասպարյանի աշխատությունները, որոնք հիմնարար նշանակություն են ունեցել աշխատանքի տեսական հատվածը հարուստ տեղեկություններով լրացնելու գործում:

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱ

1.1 Ընտանիք հասկացությունը և երիտասարդ ընտանիքի ընդհանուր բնութագրիչները

Ընտանիքն անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Ընտանիքի շնորհիվ մարդը հաղորդակցվում է մշակույթանին արժեքներին, ձեռք է բերում նաև հասարակական կյանքի փորձ: *Ընտանիքը մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, զգացմունքներով, կենցաղի ընդհանրությամբ, բարոյական պատասխանատվությամբ և փոխօգնության պատասխանատվությամբ:* Ընտանիքը սոցիալական փոքր խումբ է, որին բնորոշ են ներխմբային որոշակի գործընթացներ և երևույթներ: Միաժամանակ ընտանիքները տարբերվում են որոշ հատկանիշներով նրա անդամների միջև ամուսնական, կամ ազգակցական կապերի առանձնահատուկ բնույթով, բարոյահոգեբանական, հուզական և իրավական հարաբերություններով [1]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են[2]: Բոլոր ժամանակներում ընտանիքը մշտապես եղել է հասարակագիտական մտքի, խոշոր գիտնականների ուշադրության կենտրոնում՝ սկսած անտիկ շրջանից[3]: Ընտանիքն իրենից ներկայացնում է մարդու սոցիալական գործունեության համակարգ և գտնվում է ոչ միայն սոցիալ-քաղաքական ազդեցության ներքո, այլև ներքին զարգացման գործընթացներում: Ընտանիքի դերը հասարակության մեջ չի կարող համեմատվել իր նշանակությամբ որևէ այլ սոցիալական ինստիտուտի հետ, քանի որ ընտանիքում է ձևավորվում և զարգանում մարդու անձը: Ընտանիքում է տեղի

---

[1] Ասատրյան Լ., «Մանկավարժություն», Երևան, 2017, էջ 281:

[2] ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, «ՀՀ Սահմանադրություն» – https://www.president.am/hy/constitution-2015/ (բացված՝ 18. 08. 2022)

[3] Գաբրիելյան Մ., «Հայկական ընտանիքն անցումային շրջանում», Երևան, 2005, էջ 10:

ունենում նաև սոցիալական դերերի ճանաչում և ստանձնում, երեխայի ներգրավումը և հարմարումը հասարակության մեջ[4]:

Ընտանիքը հանդիսանում է առաջնային սոցիալականացնող ինստիտուտ: Ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալական ինստիտուտ, որը փոխկապված է մյուս սոցիալական ինստիտուտների հետ: Մասնագիտական գրականության մեջ *«սոցիալական ինստիտուտ»* հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. Սոցիալական ինստիտուտը հանդիսանում է սոցիալական նորմերի, դերերի և արժեքների համակարգ, որը ստեղծվում է հասարակության պահանջմունքների բավարարման նպատակով:

Այդ առումով անմասն չէ նաև ընտանիքի ինստիտուտը, որը հայտնի ամերիկացի սոցիոլոգ Է.Գիդդենսը բնութագրում է որպես մարդկանց խումբ, որոնք կապված են միմյանց հետ արյունակցական կամ օրինական կապերով և վարում են համատեղ տնտեսություն[5]: Ընտանիքում գոյություն ունեն հոր, մոր և զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ ու պարտականություններ: Ընտանիքի ստեղծումը չափազանց կարևոր է անձնային զարգացման համար: Մարդն իրացնում է իր կոչումը, ձեռք բերում նոր հասարակական կարգավիճակ՝ կապված սերնդի շարունակության պատասխանատվության հետ, մտնում է իր կյանքի նոր փուլ: Միաժամանակ նա բավարարում է իր գլխավոր պահանջմունքներից մեկը այլ մարդկանց հետ հարաբերությունների ոլորտում:

Այն, թե ինչպես է կառուցվում ընտանեկան կյանքը, մեծապես կախված է մարդու ընդհանուր զարգացումից՝ նրա հոգևոր աճը, ընդունակությունների զարգացումը: Հատկապես կարևոր նշանակություն ունի երեխաների ծնունդը: Երեխայի ծննդից հետո կինն ու տղամարդը միաժամանակ հանդես են գալիս որպես մայր և հայր: Նրանց ստեղծած ընտանիքը ստանում է նոր որակ, ձեռք բերում սոցիալական ինստիտուտի վերջնական կարգավիճակ: Փոխվում է ընտանեկան կյանքի ամբողջ կառուցվածքը, ամուսինները ստանում են նոր պարտականություններ, պատասխանատվության նոր տեսանկյուններ միմյանց ու իրենց երեխայի նկատմամբ:

---

[4] Гаспарян Ю., «Семья на пороге XXI века (социологические проблемы)», СПб., 1999, с. 6.

[5] Гидденс Э., «Социология», Москва, 1999.

«Ընտանիք» հասկացությանը կարելի է տալ երեք սահմանում.

Առաջին խմբի հասկացությունն ընդգծում է այն, որ ընտանիքը փոքր սոցիալական խումբ է: Ընտանիքը փոքր սոցիալական խումբ է, անձնական կյանքի կազմակերպման կարևոր ձև ամուսնական միության և ընտանեկան հարաբերությունների հիմքի վրա, այսինքն հարաբերություն կնոջ և ամուսնու միջև, ծնողների և երեխաների միջև, քույրերի և եղբայրների միջև, և այն ազգականների միջև, որոնք ապրում են միասին և ունեն ընդհանուր տնտեսություն:

Երկրորդ խմբի հասկացությունը ընտանիքը համարվում է այն կարևորագույն սոցիալական ինստիտուտն, որն ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքի ընթացքում և ունենում է մեծագույն ազդեցություն անձի ձևավորման գործընթացի վրա:

Երրորդ խումբը ընտանիքը երկու կամ ավելի անձերից բաղկացած խումբ է, որը հիմնվում է ազգակցական, արյունակցական, մտերիմ կապի վրա, «այստեղ և հիմա անմիջական միջավայրում», և որին «տուն» են անվանում: Արիստոտելը ընտանիքը համարում էր պետության հիմքը: Քանի որ յուրաքանչյուր ընտանիք հանդիսանում է պետության մի մաս և բոլոր մարդիկ հանդիսանում են ընտանիքի մասեր և քանի որ առանձին մասերի առաքինությունը պետք է համապատասխանի ամբողջ առաքինությանը, անհրաժեշտ է կանանց և երեխաների դաստիարակությունը համապատասխանեցնել պետության կառուցվածքին, և եթե դա միևնույն չէ արժանապատիվ դասակարգման ձգտող պետության համար, հետևաբար պետք է ունենալ արժանապատիվ երեխաներ և կանայք:Եվ դրա հետ պետք է հաշվի նստել, քանի որ կանայք կազմում են ազատ բնակչության կեսը, իսկ երեխաները հետագայում դառնում են քաղաքական կյանքի մասնակիցներ, որոնց համար սերը հայրենիքի հանդեպ սկսվում է ընտանիքից[6]:

Անդրադառնալով ընտանիքի զանազան սահմանումներին, այժմ սահմանենք *«երիտասարդ ընտանիք»* հասկացությունը: Համաձայն «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ»-ի՝ երիտասարդ է համարվում այն ընտանիքը, որտեղ ամուսիններից առնվազն մեկը ՀՀ 18-35 (ներառյալ) քաղաքացի է, և ամուսինների տարիքային գումարը չի գերազանցում 65-ը, և միաժամանակ ոչ մեկի

[6] Черняк Е., «Социология семьи», Москва, 2004, с. 17 – 28.

տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ), կամ, եթե երեխա ունեցող միայնակ ծնող է և տարիքը չի գերազանցում 30-ը (ներառյալ)[7]:

Երիտասարդ ընտանիքը համարվում է հատուկ սոցիալական օբյեկտ, որն ունի հստակ տարբերություններ «ավագ» ընտանիքից: Համաձայն «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի *երիտասարդ*՝ Հայաստանի Հանրապետության 18-30 (ներառյալ) տարեկան քաղաքացիներն են, *երիտասարդ ընտանիք*՝ ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը երիտասարդ է, կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ): Երիտասարդ ընտանիք է համարվում այն ընտանիքը որի անդամներից մեկն երիտասարդ է: Տարբեր հեղինակներ տալիս են երիտասարդության շրջանի տարբեր տարիքային սահմաններ: Ըստ Ջ. Բիրրենի շրջանը ընդգրկում է 17-25 տարեկանը, ըստ Յ.Բ. Բրոմլեյի 21-25 տարեկանը, ըստ Գ. Կրայգի՝ 20-40, ըստ Վ.Քուիննի՝ 18-40, իսկ ըստ Էրիքսոնի՝ 20-25 տարեկանը[8]:

Էրիկսոնը իր հոգեսոցիալական տեսության մեջ երիտասարդության շրջանը նկարագրում է որպես հոգատարության, ամուսնության և ընտանեկան կյանքի շրջան: Այս փուլում Էրիքսոնը նշում է մտերմության ու մեկուսացման հակասությունը: Միայն այս տարիքում է անձը պատրաստ մտերիմ հարաբերությունների մեկ այլ մարդու հետ, ինչպես սոցիալական, այնպես էլ սեռական պլանում: Էրիքսոնը «մտերմություն» ասելով, ամենից առաջ այն հասկանում է որպես խորհրդավոր, գաղտնի զգացմունք, որը մենք զգում ենք դեպի մեր կողակիցը, ընկերը, եղբայրը, քույրը, ծնողը, կամ այլ հարազատները: Նա նաև ասում է, որ դա անձնական նույնականացման ձուլումն է այլ մարդու նույնականացման հետ: Որպեսզի մարդը իսկապես մտերիմ հարաբերությունների մեջ գտնվի այլ մարդու հետ, անհրաժեշտ է, որ այդ ժամանակ արդեն անհատը գիտակցի, թե ինքն ով է, և իրենից ինչ է ներկայացնում: Սակայն եթե

---

[7] ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, «Հայաստանի երիտասարդության ազգային զեկուց», Երևան, 2007, էջ 43:

[8] Ермолаева М., «Психология зрелого и позднего возрастов в вопросах и ответах», Москва, 2004, с. 28.

մարդը չի հասնում մտերմության դա բերում է միայնակության զգացման, սոցիալական մեկուսացման[9]:

Ըստ Ի.Վ.Գրեբենիկովայի՝ ամուսնության նախնական շրջանը բնութագրվում է ընտանեկան ինտեգրմամբ և հարմարվողականությամբ: Ինտեգրումը ամուսինների կամավոր միասնությունն է, ընտանեկան կյանքի մասին պատկերացումների, տեսակետների, կարծիքների համաձայնեցումն է: Երիտասարդ ընտանիքները այս փուլում պետք է ճանաչեն իրենց խնդիրները և լուծումներ փնտրեն՝ հաղթահարեն սթրեսային իրավիճակները՝ կապված երեխայի՝հատկապես առաջնեկի ծննդով, տիրապետեն ծնողավարման հմտություններին, ձեռք բերեն գիտելիքներ ընտանիքի գործունեության տարբեր ասպեկտների, կողմերի մասին, հասնեբ տնտեսական բարգավաճման և կայունության, ստեղծեն ակտիվություն և սուբյեկտիվություն, ինչպես ընտանեկան հարաբերություններում, այնպես էլ նորաստեղծ ընտանիքի և հասարակության միջև[10]:

Ընտանիքի ինստիտուտի զարգացման ամենակարևոր փուլերից է երիտասարդ ընտանիքի փուլը: Ընտանիքի գոյության նախնական շրջանում, որպես կանոն, ավարտվում է ամուսինների անհատականության գծերի փոխադարձ հարմարումը, հաստատվում է ընտանիքի պարտականությունների բաժանումը: Սովորաբար այս փուլում ծնվում է երեխա, և այդպես ավարտվում է այս փուլի ձևավորումը՝ որպես սոցիալական խումբ: Երիտասարդ ընտանիքը միևնույն ժամանակ ենթարկվում է սոցիալական ռիսկի անխուսափելի տարրերի, այդ պատճառով այն ավելի շատ կարիք ունի պետության օգնության իր բնականոն գործունեության համար նոր պայմաններ ստեղծելու նպատակով: Սրանով է պայմանավորված երիտասարդ ընտանիքներին աջակցելու անհրաժեշտությունը, պետք է կանխել բացասական միտումները և ամրապնդել իր բոլոր կենսական սկզբունքները: Երիտասարդ ընտանիքների հետազոտության հիմնական հարցը հանդիսանում է ընտանիքի գործունեության որակի ցուցանիշները[11]:

---

[9] Журавлев А., «История разработки проблемы психологии зрелости» // Феномен и категория зрелости в психологии, Москва, 2007, с. 108 – 127.

[10] Джери Д., «Большой толковый социологический словарь», Москва, 1999, с. 478.

[11] Навайтис Г., «Семья и психолог», Калининград, 1996, с. 138.

Բարեկեցիկ երիտասարդ ընտանիքը պետք է ապահովի՝ վերարտադրություն, անհրաժեշտ չափով դաստիարակություն և սոցիալականացում, ազգային սոցիալ-մշակութային արժեքների ձևավորում երեխաների համար, հուզական և հոգեբանական կայուն հարաբերություններ, պայմաններ առողջության պահպանման և ամրապնդման համար[12]:

Ընտանիքի բարեկեցությունը բնութագրվում է տարբեր չափանիշներով, որոնք ենթարկվում են որակական և քանակական չափումների:

1. Բարեկեցության տնտեսական ասպեկտը ենթադրում է ընտանիքի տնտեսական ինքնուրույնությունը, բնակության ապահովումը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտը ոչ պակաս, քան մեկ շնչի հաշվով միջին եկամուտը այդ տարածաշրջանում:
2. Ընտանիքի բարեկեցության ժողովրդագրական տեսանկյունները բնութագրում են կատարյալ ընտանիքը որպես ընտանիք՝ կազմված երկու ամուսիններից և երեխաներից:
3. Ընտանիքի որակի գործառնման սոցիալ-հոգեբանական ասպեկտները բազմանթիվ են և ամենաքիչն են ենթարկվում հստակ չափման:
4. Սոցիալ-մանկավարժական ասպեկտները ենթադրում են ամուսինների մանկավարժական գրագիտությունը[13]:

Դիտարկենք ավելի մանրամասն, թե ինչպես են ժամանակակից գիտական գրականության մեջ ներկայացված ընտանիքի բարեկեցության սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ասպեկտների խնդիրները: Հոգեբան Օբոզովան կարծում է, որ կայուն ամուսնությունը պայմանավորված է ամուսինների հետաքրքրությունների և արժեհամակարգի համապատասխանությամբ և անձնական որակների տարբերությամբ: Ընտանիքի կայունությանը նպաստում է նաև ընտանիքի անդամների բանակցություններ վարելու կարողությունը: Ընտանիքի հոգեթերապիայի մասնագետները նշում են, որ *«նորմալ գործառնող ընտանիքը այն ընտանիքն է, որը պատասխանատու կերպով կատարում է իր գործառույթները, ինչի արդյունքում*

[12] Гребенников И., «Основы семейной жизни», Москва, 1991.

[13] Гидденс Э., «Современная социологическая теория», Москва, 2000, с. 148.

բավարարվում են թե՛ ընտանիքի՝ որպես մեկ ամբողջություն, թե՛ նրա յուրաքանչյուր անդամի պահանջմունքները»[14]:

Ըստ ժամանակակից հետազոտողների՝ հաջողված է համարվում այն ամուսնությունը, որը բնութագրվում է հետևյալ որակներով՝ հանդուրժողականություն, փոխադարձ հարգանք, ազնվություն, միասին լինելու ցանկություն, հետաքրքրությունների և արժեհամակարգերի ընդհանրություն: Բարեկեցիկ ընտանիքը սահմանում են հետևյալ չափանիշներով.

1. Խմբի բոլոր անդամների կողմից խմբային պատկանելիության զգացում և ցանկացած այլ անձանց դիտարկումը որպես օտարի:
2. Անհատական գործողությունների ամբողջական ինտեգրումը՝ ընտանեկան նպատակներին հասնելու համար:
3. Ենթադրություններ այն մասին, որ հողը, գումարը կենցաղային իրերը հանդիսանում են ընտանեկան ընդհանուր միջոց:
4. Ընտանիքի անդամներին աջակցելու պատասխանատվություն:
5. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից վստահություն, որ անհրաժեշտության դեպքում ընտանիքի կողմից աջակցություն կստանա:
6. Ընտանիքի բարեկեցության համար հոգատարություն:
7. Հասուն երեխաների տնտեսական աճի և զարգացման շրջանում ընտանիքի կողմից օգնություն:

Ի. Վ. Գրեբեննիկովը, դիտարկելով ընտանիքի բարեկեցության խնդիրները, մեծ նշանակություն է տալիս ամուսինների բազմակողմանի համապատասխանությանը. սոցիալական, հոգեբանական, սեռական, առօրյա-կենցաղային: Ս. Վ. Կովալևը առանձնացնում է նաև ամուսինների համապատասխանությունը՝ որպես կայուն ամուսնության կարևորագույն պայման: Նա առաջարկում է համապատասխանության երեք հիմնական տեսակներ՝ հոգե-ֆիզիոլոգիական, գործառութա-դերային, արժեքա-կողմորոշային[15]:

---

[14] Шнейдер Л., «Психология семейных отношений», Москва, 2010, с. 48 – 49.

[15] Татарова Г., «Методология анализа данных в социологии» – www.socioline.ru/node/835 (բացված՝ 20. 08. 2022)

1.2 Ընտանեկան հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները

Որպեսզի ընտանիքը նորմալ գործի, այն պետք է իր բոլոր հիմնական կարիքների բավարարման հնարավորություն ունենա: Երիտասարդները, ամուսնանալով և սահմանելով ընտանեկան կյանքի կանոնները, պետք է անպայման մտածեն կարևորագույն խնդիրների մասին. որտեղ ապրել, ինչով ապրել, ով է իր վրա վերցնելու ընտանիքը նյութապես ապահովելու պարտականությունը, կամ ամուսինները կկիսեն այդ պարտականությունը գոնե մի որոշ ժամանակ: Սերը և գումարը, իրար չհամապատասխանող հասկացություններ են, շատ դեպքերում ընտանիքի գոյության գրավականն են, հատկապես մեր օրերում: Երիտասարդ ընտանիքները կայացման գործընթացում բախվում են բազմաթիվ դժվարությունների, խնդիրների, որոնք ազդում են յուրաքանչյուր ընտանիքի զարգացմանը[16]:

1. *Միմյանց հարմարվելու գործընթացը*[17]

Ամուսնության առաջին տարիներին տեղի է ունենում ամուսինների՝ միմյանց հարմարվելու գործընթացը, ընդ որում հակասությունները և դրանց ոչ պատշաճ լուծումը կարող է բերել ընտանիքի փլուզման: Կան լուրջ պատճառներ ենթադրելու, որ երիտասարդ ընտանիքը մշտապես գտնվում է ոչ հավասարակշռված կարգավիճակում: Ըստ Վ.Մետյուզայի և Կ. Մեխանովիչի՝ ընտանիքում հարաբերությունների խնդիրները նման են իրար հետևյալ չափանիշներով[18].

- Բազմաթիվ հարցերում չեն համընկնում ամուսինների կարծիքները, տեսակետները, ինչպիսիք են ընտանիքում դերերի բաշխումը, նյութական բարեկեցության աստիճանը, երեխաների դաստիարակությունը, ժամանցի, հանգստի անցկացնումը:
- Ամուսինները սխալ են հասկանում միմյանց զգացմունքները: Հաճախ դա պայմանավորված է այդ զգացմունքները արտահայտելու անկարողության հետ, օրինակ, կարծում են, որ զուգընկերը պետք է հասկանա կես խոսքից, հայացքից, ժեստից:

---

[16] Зацепин В., «О жизни супружеской», Москва, 1978.

[17] Черняк Е., նշվ. աշխ., էջ 17 - 28:

[18] Ритцер Дж., նշվ. աշխ., էջ 157:

- Ամուսինները ասում են բառեր, որոնցով զայրացնում են միմյանց: Ակնհայտ է, որ համակեցությունը ենթադրում է վարքագծի մի շարք պահանջներ: Անհրաժեշտ է ընտանիքի խաղաղության և հանգստության համար ինչ-որ բան զոհաբերել: Իհարկե զոհաբերությունը չպետք է չափազանց մեծ լինի:
- Հաճախ կինը կամ տղամարդը իրեն չսիրված է զգում, ինչը ստեղծում է խնդիրներ:

Որպեսզի հաղթահարվեն այս խնդիրը անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես են ամուսինները ցույց տալիս իրենց սերը միմյանց նկատմամբ.

- ամուսինները ուշադիր չեն միմյանց նկատմամբ,
- ամուսինները բավարար չափով չեն վստահում միմյանց,
- ամուսինները հազվադեպ են հաճոյախոսություններ անում,
- ամուսինները ցանկանում են ավելի շատ սեր: Սա ընդհանուր պահանջ է, որին զումարվում է *«ավելի մեծ ուշադրությունը», «ավելի շատ վստահությունը»*[19]:

Ամուսինները ձևավորելով երիտասրդ ընտանիք՝ համատեղ բնակության պահից մինչև առաջին երեխայի ծնունդը փորձում են հարմարվել միմյանց: Այս ժամանակահատվածի գլխավոր նպատակը՝ անձնական անկախության վիճակից անցումը ամուսինների փոխկապակցված վիճակին: Այդ ժամանակ որոշվում է նաև ծնողական ընտանիքից տարբերակման (դիֆերենցման) խնդիրը, եթե դա տեղի չի ունեցել ավելի վաղ: Սահմանվում են ընկերների ու հարազատների հետ շփվելու նոր սահմաններ, լուծվում են անձնական ու ընտանեկան կարիքների միջև անհամաձայնությունները:

Հնարավոր է, որ ընտանեկան օջախը ստեղծել է զույգի անդամներից մեկը (կամ երկուսն էլ) մինչև համատեղ բնակեցումը: Դա կարող ծառայել որպես ընտանիքի հիմնական գործառույթների նախադրյալ: Այս ժամանակահատվածում նոր ընտանիքը բնակություն է հաստատում ծնողական ընտանիքներից մեկում, ինչը խախտում և արգելակում է ընտանիքի զարգացումը, որպես ինքնուրույն համակարգ: Այդ դեպքում նոր զույգը փաստացի դառնում է ծնողական ընտանիքի համակարգի

[19] Черняк Е., նշվ. աշխ., էջ 17 - 28:

ենթահամակարգ: Բացի այդ ամուսինները, որոնք բնակվում են զոքանչի կամ սկեսուրի տանը, հաճախակի գտնվում են երեխայի դերում: Ամուսնու ծնողներին «մայրիկ» և «հայրիկ» կոչելը ուժեղացնում է այդ անբարենպաստ կախվածությունը: Այդ իրավիճակում առաջացող հակամարտությունը (կոնֆլիկտը) բոլորին հայտնի է, և հաճախ դիտարկվում է թշնամանք սկեսուրի և հարսի միջև, կամ փեսայի և նրա կնոջ ծնողների միջև[20]:

2. Կենցաղային վեճեր

Այս ժամանակահատվածի մեկ այլ լուրջ խնդիր կարող է դառնալ զույգի ծնողներից մեկի միջամտությունը ընտանեկան գործերին, որը հաճախ տեղի է ունենում, եթե նույնիսկ նրանք միմյանցից առանձին են ապրում: Օրինակ, կնոջ մայրը փորձում է ստիպել երիտասարդ ամուսնուն կատարել իրեն անհարժեշտ պարտականությունները: Կամ ընդհակառակը, ամուսնու մայրը ամեն կերպ քննադատում է երիտասարդ կնոջը, համարելով, որ նա վատ տնային տնեսուհի է և վատ է խնամում իր որդուն: Քիչ չեն և անմիջական միջամտությունները, երբ սկեսուրը ինքնակամ կարգուկանոն է հաստատում, կրկնակի անգամ լվանում կամ արդուկում է սպիտակեղենը, պարբերապար տնային ուտելիքներ է բերում, որպեսզի որդին «սոված» չմնա և այլն: Սովորաբար նման պահվածքը ապակայունացնում է ընտանեկան իրավիճակը, վրդովմունքի և վեճի է հանգեցնում: Երկու ամուսիններն էլ պետք է հոգ տանեն այն բանի մասին, որ իրենց ծնողները չխախտեն երիտասարդ ընտանիքի սահմանները: Միաժամանակ, խորհուրդ չի տրվում ամբողջովին մեկուսանալ ծնողական ընտանիքից, պարզապես ծնողները պետք է փոխեն երեխաների հետ իրենց փոխազդեցության ձևերը, երիտասարդների ամուսնությունից հետո[21]:

Կարևոր է, որպեսզի նորապսակները սովորեն միմյանց միջև քննարկել ցանկացած վիճելի հարցերը և պայմանավորվեն: Խնդիրները կարող են գրավել կյանքի բոլոր ոլորտները. կենցաղային պարտականությունները և կենսական կարևորություն ունեցող հարցերի պատասխանատվությունը, սեռական հարաբերությունները և երեխա ունենալու ցանկությունը, ընտանիքի ֆինանսական ապահովումը և

[20] Захаров А., «Психологические особенности диагностики оптимизации взаимоотношений в конфликтной семье» // Вопросы психологии., СПб., 2007.

[21] Берн Ш., «Гендерная психология», Москва, 2001, с. 125.

ամուսինների անձնական ֆինանսները: Երիտասադ ամուսինները պատկանում են «երիտասարդություն» սոցիալական խմբին, դրա համար էլ երիտասարդ ամուսինների աշխատանքի տեղավորման իրավիճակի վրա ընդհանուր առմամբ ազդում է այն, թե ինչպես են ընթանում գործերը տարածաշրջանային երիտասարդների աշխատաշուկայում և թե ինչ դժվարությունների են նրանք հանդիպել աշխատանք որոնելիս[22] :

3. Սոցիալական և զբաղվածության ապահովման խնդիրներ

Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների պայմաններում աշխատանքի և զբաղվածության ոլորտում շուկայական հարաբերություններին անցումը հանգեցրել է սոցիալ-աշխատանքային հարաբերություններում սկզբունքորեն նոր իրավիճակի ստեղծմանը: Տվյալ իրավիճակը հատկապես ծանր ու ցավալի էր երիտասարդների համար, որը սոցիալ-հոգեբանական բնութագրերի առանձնահատկությունների պատճառով անպատրաստ է (պատրաստված չէ) աշխատանքային շուկայի ժամանակակից իրողություններին: Առաջին անգամ աշխատանքային շուկա դուրս գալու ժամանակ երիտասարդների մոտ գերակշռում է ապագա մասնագիտության, աշխատանքային և մասնագիտական կարիերայի վերաբերյալ իդեալիստական պատկերացումները, որոք աշխատանքային շուկայում առաջին քայլերից վերանում են և դրա փոխարեն առաջանում է բարդ սոցիալ-հոգեկան իրավիճակ (անհանգստություն; դեպրեսիա, սթրես), որը ազդում է հաղորդակցային (կոմունիկացիան) ոլորտի վրա և ուղեկցվում է անելանելիության զգացողությամբ աշխատանքի տեղավորման անհնարինության պայմաններում[23]:

Աշխատանքային իրականության հետ բախումը հանգեցնում է վերակողմնորոշման կամ աշխատանքային արժեքների դեգրադացիայի: Հենց այդ պատճառով էլ ժամանակին հարմար աշխատանքի տեղավորման խնդիրը ժամանակակից երիտասարդության համար առավել կարևոր և արդիական

[22] Черняк Е., նշվ. աշխ., էջ 17 - 28:

[23] Кузнецова М., «Молодая семья и ее социальная защита в современном обществе. Социальная работа с семьей», Москва, 1995.

խնդիրներից մեկն է, և հարկ է նշել, նա, բնականաբար, կապված է երիտասարդ ընտանիքների նյութական-կենցաղային և բնակարանային ապահովվածության հետ[24]:

Երիտասարդների կրթություն ստանալու ժամանակաշրջանը հետաձգում է աշխատանքային կյանքին անցնելու պահը և մասնագիտական հասունության հասնելու պահը, դրա հետ մեկտեղ հետաձգում է ֆինանսական անկախության և երիտասարդ ընտանիքի նյութական բարեկացության պահը: 18-24 տարեկան երիտասարդները ուսանողներ են, նոր են ավարտում կամ արդեն ավարտել են մասնագիտական պատրաստումը: Սակայն կրթություն ստանալուց հետո նրանք կազմում են աշխատաշուկա մտնող առավել խոցելի խումբը, քանի որ չունեն բավարար մասնագիտական և սոցիալական փորձ, և հետևաբար, մրցունակ չեն[25]:

Եվ իհարկե, զբաղվածության հետ լրացուցիչ խնդիրներ ունեն երիտասարդ ամուսնացած կանայք, որոնք ունեն կամ դեռ չունեն երեխա: Խնդիրներին, որոնք ընդհանուր են տղամարդկանց հետ, ավելանում եմ յուրահատուկ խնդիրներ: Աշխատանքի ընդունելության ժամանակ կարող են մերժել մտավախություն ունենլով, որ պոտենցիալ աշխատակիցը կամ շուտով արձակուրդ կվերցնի երեխայի խնամքի համար, կամ ավելի շատ ուշ, ու ավելի շատ ժամանակ կտրամադի ընտանիքին ու երեխային, բայց ոչ մասնագիտական պարտականությունների կատարմանը: Գործատուները, ձգտելով իրենց «ապահովագրել», կիրառում են երիտասարդ աշխատակիցների վրա ազդելու մի շարք ոչ օրինական (ապօրինի) եղանակներ. Օրինակ, պահանջում են *«հղիության դեպքում սեփական դիմումի համաձայն աշխատանքից ազատում»* կամ *«առաջիկա 3 տարում չհղիանալու վերաբերյալ»,* պայմանագիր/համաձայնագիր կնքել, իսկ ավելի հաճախ պարզապես աշխատանքի են ընդունում առանց աշխատանքային պայմանագրի կնքման և աշխատանքային գրքույկում առանց համապատասխան գրառման՝ դրանից բխող բոլոր հետևանքներով և երիտասարդ կանանց լիարժեք իրավական անպաշտպանությամբ[26] :

Երիտասարդների աշխատանքի տեղավորման խնդիրը էապես անդրադառնում է երիտասարդ ընտանիքներում, իսկ երբեմն նույնիսկ սպառնում է նրա գոյությանը:

---

[24] Берн Ш., նշվ. աշխ., էջ 125:

[25] Ритцер Дж., նշվ. աշխ., էջ 148 - 178:

[26] Նույն տեղում, էջ 148 - 178:

Քանի որ աշխատանքի բացակայության պատճառով շատ երիտասարդներ ֆինանսապես կաշկանդված են, ինչի պատճառով չեն կարող պահել սեփական ընտանիքը: Ուստի շատ զույգեր միասին են ապրում, իրենց ծնողների հետ: Երիտասարդների մի մասը մեկ այլ ելք է գտել. նյութական անկայունության հետևանք է հանդիսանում նաև քաղաքացիական ամուսնությունների քանակի ավելացումը, քան որ մարդիկ վախենում են իրենց վրա վերցնել ապագա ընտանիքի պատասխանատվությունը և նախընտրում են *«ժամանակավոր կացության»* իրավիճակը[27]:

Երիտասարդների աշխատանքի տեղավորման խնդիրը չափազանց բարդ է, և նրա վիճակը անմիջականորեն անդրադառնում է երիտասարդ ընտանիքի վրա: Քանի որ կարելի է վստահորեն ասել, որ երիտասրդ ընտանիքը, որտեղ ամուսիններից գոնե մեկը աշխատում է մշտական, լավ վարձատրվող աշխատանքում, ավելի քիչ խնդիրներ և վեճերի առիթներ ունի: Ամուսնությունից հետո առաջացած երիտասարդ ընտանիքների մոտ նույնպես կան ցանկալի աշխատանք գտնելու խնդիրներ: Շատ երիտասարդ ընտանիքներ երկար ժամանակ հետաձգում են երեխաների ծնունդի հարցը, վախենալով չկարողանալ տանել երեխայի հոգսերը: Իսկ որոշ երիտասարդ ընտանիքներ, ապրելով ծնողների հետ, սեփական բնակարանը ունենալու անկարողության պատճառով, բաժանվում են, քան որ չեն հանդուրժում ծնողների մշտական միջամտությունը[28]:

Միևնույն ժամանակ, չի կարելի չնշել, որ երիտասարդ ընտանիքների մոտ նյութական խնդիրների առկայությունը բավականին սուբյեկտիվ է այն առումով, որ երիտասարդ ամուսինները կողմնորոշվում են սպառողական ստանդարտների որոշակի մակարդակի վրա, որը որոշվում է բնակավայրի տեսակով (գյուղ, ավան, փոքր կամ մեծ քաղաք), այս կամ այն սոցիալական խմբին պատկանելությամբ, կրթության մակարդակով և այլն: Խնդիրը ոչ այնքան եկամուտների մակարդակի մեջ է, որքան երիտասարդների ձգտումների մակարդակի, կյանքի որակի և ստանդարտների սուբյեկտիվ պատկերացումների մեջ:

---

[27] Берн Ш., նշվ. աշխ., էջ 125:

[28] Сысенко В., «Супружеские конфликты», Москва, 1989.

Այս եզրակացությունը շատ կարևոր է սոցիալ-տնտեսական ու սոցիալ-հոգեբանական խնդիրներ հարաբերական նշանակությունը հասկանալու համար: Չնայած երիտասարդ ընտանիքների պատկերացումներում առաջնային դեր է խաղում սոցիալ-տնտեսական խնդիրների գոհունակությունը, հետազոտությունները հանգեցնում են այն եզրակացության, որ երիտասարդ ընտանիքի բարեկացիկ կերպարի ձևավորման համար շատ ավելի կարևոր է ոչ թե եկամուտների մակարդակը, այլ նրա բավարարության համոզմունքը ընտանիքի համար դրական հեռանկարների վստահության առկայությունը ընդհանուր առմամբ և ամուսինների յուրաքանչյուրի համար:

Երիտասարդ ընտանիքը կազմված է երիտասարդ մարդկանցից, ովքեր հիմանականում դեռ չեն զբաղեցրել իրենց դիրքը աշխարհում և չեն հաստատել իրենց սոցիալական կարգավիճակը: Սկզբնական շրջանում, կայուն ընտանիք ստեղծելու համար, մեծ խոչընդոտ է հանդիսանում գործազրկությունը և ֆինանսական անկայունությունը: Երիտասարդ ընտանիքների մեկ շնչի հաշվով միջին եկամուտը 1.5 անգամ ցածր է,քան ամբողջ երկրի բնակչությանը, և երիտասարդ ընտանիքների 60% ապրում է աղքատության շեմին: Որոշ ընտանիքներում ֆինանսական ծանր դրությունն առաջանում է եկամտի ոչ ճիշտ բաշխման պատճառով, այլ կերպ ասած՝ ընտանիքի անդամները կարող են չտիրապետել նյութական ռեսուրսների արդյունավետ բաշխման հմտությունների[29]:

Երիտասարդները, ընտանիք կազմելով, առաջին հերթին մտածում են նյութական և բնակարանային խնդիրների մասին: Սակայն, ըստ բազմաթիվ հետազոտությունների տվյալների, նյութական և բնակարանային ապահովվածության գործոնը ընտանիքի կայունության վրա ուղղակիորեն չի ազդում: Սակայն կյանքի վատ նյութական պայմանները հաճախ նպաստում են կոնֆլիկտային իրավիճակներին, որոնք ծագում են այլ պատճառներով:

[29] Թաղևոսյան Գ., «Հայ ընտանիքը սոցիալական փոփոխությունների արդի փուլում», Երևան, 1999, էջ 44:

ԳԼՈՒԽ 2

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Ընտանիքի հոգեբանությունը պարզելու, կոնֆլիկտածին պատճառներն ու գործոնները բացահայտելու, ինչպես նաև ընտանիքում խաղաղության, համերաշխության և կայունության վերականգնման նպատակով անցկացվել է գործնական-հետազոտական աշխատանք Նորք Մարաշի ՍԱՏԲ-ում հաշվառված ընտանիքներից մեկի հետ, որում առկա են կոնֆլիկտային խնդիրներ:

Կառույցը/Հաստատությունը – Նորք Մարաշի սոցիալական աջակցության տարածքային բաժին (այսուհետև՝ ՍԱՏԲ):

Ժողովրդագրական տվյալներ

1. Ա. Պետրոս (ծնվ. 1969թ.) ընտանիքի հայրն է, չի աշխատում ունի հաշմանդամության 3 խումբ, ստանում է հաշմանդամության թոշակ: Ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը բացասաբար է անդրադառնում նրա վրա և տանը շատ հաճախ կոնֆլիկտներ է ունենում ընտանիքի անդամների հետ: Այդ իսկ պատճառով դարձել է փակ և ինքնամփոփ:
2. Խ. Լաուրա (ծնվ. 1976թ.) ընտանիքի մայրն է, չի աշխատում, խնամում է երեխաներին: Չնայած նրան, որ նա չունի հաշմանդամության խումբ, ունի բազմաթիվ առողջական խնդիրներ: Ոտքերը այտուցվում են ծանր աշխատանքների պատճառով (սեփական տանը կից փոքրիկ հողատարածքում աշխատանքներ է կատարում), որպեսզի կարողանա որոշ չափով թեթևացնել ընտանիքի հոգսը:
3. Ա. Սիրանուշ (ծնվ. 1995թ.) չի աշխատում: Բավականին աշխույժ օրիորդ է շատ է օգնում ծնողներին տան կենցաղում: Ուներ առողջական խնդիրներ շնչուղիների հետ կապված, սակայն ՍԱՏԲ-ի սոցիալական աշխատողի կողմից տրամադրվել է պետպատվերի տեղեկանք, որի շրջանակներում կատարվել է

բժշկական միջամտություններ, որի արդյունքում նա ունի դրական առողջական փոփոխություններ:

4. Ա. Նոյել (ծնվ. 2002թ.) սովորում է դպրոցում: Նրա առաջադիմությունը բարձր է:
5. Ա. Արթուր (ծնվ. 2009թ.) սովորում է դպրոցում: Սոցիալակա աշխատողը զրուցել է երեխաների դասղեկների հետ:
6. Ա. Ռոմիկ (ծնվ. 1996թ.) աշխատում է որպես բանվոր, ստանում է 44000 դրամ, որը ամբողջովին տրամադրում է տան հոգսերին:
7. Ա. Մարիամ (հարս) (ծնվ. 1997թ.) չի աշխատում, խնամում է երեխաներին: Նախկինում բավականին կոնֆլիկտային անձ է եղել, քանի որ հայրական տանը ապրել է անբարենպաստ պայմաններում (տնակ): Տանը ամուսնու ծնողների հետ միջանձնային հարաբերությունները լարված էին այդ իսկ պատճառով Մարիամը և Ռոմիկը գնացին ապրելու վարձով, սադրիչը եղել է Մարիամը, քանի որ չի ցանկացել ենթարկվել տան կանոններին: Հղիության ընթացքում, բախվելով կյանքի դժվարին իրավիճակներին (սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգոբանական, ֆինանսական և այլն), ամուսնու և երեխայի հետ վերադարձավ ամուսնու հայրական տուն:
8. Ա. Լաուրա (ծնվ. 2017թ.):
9. Ա. Միլենա (ծնվ. 2018թ.) երեխաները չեն հաճախում մանկապարտեզ:

Երկու ընտանիքների միավորումից հետո ապրում էին քիչ թե շատ նորմալ, սակայն 2018թ դեկտեմբեր ամսին, կենցաղային վեճի պատճառով ընտանիքում տեղի է ունեցել բռնություն: Ռոմիկը լինելով ալկոհոլի ազդեցության տակ կենցաղայիյն հարցերի շուրջ վիճաբանել է ընտանիքի բոլոր անդամների հետ, որի ընթացքում ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել հորը՝ Պետրոսին և պատճառել է մարմնական վնասվածքներ: Ինչպես նաև հարվածել է կնոջը Մարիամին, վիճաբանել մոր և քրոջ հետ և հրել 1,7 տարեկան դստերը:

Հայտնի է, որ Ռոմիկը պարբերաբար ալկոհոլ է օգտագործում, որը բացասաբար է անդրադառնում նրա վարքի վրա: Բռնության դեպքից հետո ընտանիքին տրամադրվել է սոցիալական աշխատող, ով ընտանիքի անդամների հետ վարել է սոցիալ-հոգեբանական զրույց, որի ընթացքում լսվել են տան անդամների իրաի

հակասող կարծիքները: Քննարկվել են տան եկամուտները, ծախսերը, կոնֆլիկտներ առաջացնող խնդիրները: Ամփոփելուց պարզ դարձավ, որ ամբողջ ընտանիքը կմիավորվի, որ Ռոմիկին դուրս բերեն ճգնաժամային իրավիճակից:

Ընտանիքի դերային կառուցվածքը

Ընտանիքը բաղկացած է 9 անդամից: Ընտանիքի հայրը, մայրը, երկու անչափահաս երեխաները, չափահաս աղջիկը, չափահաս տղան, նրա կինը և նրանց երկու անչափահաս աղջիկները:

Բնակության և կոմունալ-կենցաղային պայմանները

Ընտանիքը չունի մշտական կացարան, այդ իսկ պատճառով հեռու ազգականը, որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, տրամադրել է իր տունը ժամանակավոր այս ընտանիքին: Նախկինում նրանք ապրել են Շիրակի մարզում, ինչ-ինչ պատճառներով կորցրել են իրենց սեփականությունը և հայտնվել փողոցում: Տունը բավականին հին է ու խոնավ և գտնվում է անմխիթար վիճակում, կոմունալ հարմարությունները գտնվում են դրսում, տան պատերը վերանորոգված չեն: Կահույքը հին է բավականին մաշված և անհրաժեշտ են կենցաղային իրեր բավարար կենսապայմաններ ապահովելու համար: Խոհանոցը անմխիթար վիճակում է, սանհանգույցը և լոգարանը գտնվում են տանից դուրս բակի ետնամասում: Չափահասները չունեն մշտական աշխատանք:

Ընտանիքի ֆինանսատնտեսական վիճակը

Ընտանքիը ընդգրկված է ընտանեկան նպաստ համակարգում: Ֆինանսական հաջորդ ռեսուրսները Ռոմիկի աշխատավարձն է և Պետրոսի հաշմանդամության թոշակը: Ընտանիքը օգտվում է պետպատվերի հնարավորությունից նաև ձմռան ամիսներին գազի և էլեկտրաէներգիայի զեղչերից: Օգտվում են գերմանական Կարմիր խաչի կողմից տրամադրվող ամենօրյա սննդից:

Ռեսուրսներ

- *Ներքին՝* կամային բարձր հատկանիշներ, պատրաստակամություն, ցանկություն՝ փոփոխություններ իրականացնելու կենսագործունեության մեջ, աշխատասիրություն;
- *Արտաքին՝* ՍԱՏԲ, աշխատավայր, աշխատակիցներ, հարևաններ;
- *Նյութական՝* աշխատավարձ, նպաստ, հաշմանդամության թոշակ;
- *Մարդկային՝* հարևաններ, աշխատակիցներ, բարեկամներ:

Հայտնաբերված հիմնախնդիրների սահմանման / Կարիքների գնահատման փուլ

- Ընտանիքը ունի սեփական բնակարանի կարիք,
- Ընտանիքը չունի բավարար եկամուտի աղբյուր,
- Ընտանքի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման կարիք,
- Սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման կարիք,
- Ֆինանսական խնդիրներ,
- Բնաիրային օգնության կարիք

Դեպքի վարման նպատակ

Ընտանքի սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավում, ֆինանսա-տնտեսական վիճակի կայունացում, սեփական կացարանի, բավարար եկամուտի աղբյուրի խնդրի լուծումներ:

Ակնկալվող արդյունքներ

1. Ընտանիքի սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավում,
2. Ընտանիքի շփման շրջանակների ընդլայնում,
3. Ֆինանսա-տնտեսական ռեսուրսների ընդլայնում,
4. Առողջական վիճակի բարելավում,
5. Չափահասների աշխատանքի տեղավորում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ընտանիքի հոգեբանություն. կոնֆլիկտներ» թեմայի հետազոտության արդյունքում եկանք մի շարք կարևոր եզրակացությունների, մասնավորապես՝

- Ընտանիքի բավականին բարդ ու բազմաբնույթ ինստիտուտ է, որի հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքներ իրականացնելիս հարկավոր է ցուցաբերել անհատական, այլ ոչ թե ընդհանրական մոտեցում: Յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատելիս հարկավոր է ուսումնասիրել տվյալ ընտանիքի բնութագիրչներն ու հատկանիշները;
- Ժամանակակից հայ ընտանիքներում առավել հաճախ հանդիպող ընտանեկան կոնֆլիկտները մեծամասամբ կապված են լինում սոցիալական, ֆինանսական և նյութական դժվարությունների հետ, որոնց ընտանիքները բախվում են կա՛մ ամուսնական կյանքի սկզբնական շրջանում, կա՛մ ընթացքում;
- Ընտանեկան կոնֆլիկտների կարգավորման ընթացքն առավել բարդ է ընթանում, երբ տվյալ ընտանիքներում բնակվում են ալկոհոլային կախում, թմրամոլությամբ տառապող կամ հոգեկան շեղումներ ունեցող անձինք, ովքեր իրենց գործողություններով անառողջ մթնոլորտ են ստեղծում ընտանիքում:

Առկա եզրակացությունների հիման վրա ձևավորված մեր առաջարկությունները հետևյալն են՝

- Կազմել ընտանիքի հետ սոցիալ-հոգեբանական հետազոտության անցկացման պարզ և արդյունավետ կիրառելի ուղեցույց;
- Պարբերաբար անցկացնել սեմինար-քննարկումներ, ինչպես նաև գործնական պրակտիկաներ հոգեբանության և սոցիալական աշխատանք առարկաներից՝ դրանցում ակտիվորեր ներգրավելով ինչպես համապատասխան մասնագիտություն ունեցող ուսանողներին, այնպես էլ տվյալ ոլորտներում աշխատող երիտասարդ մասնագետներին՝ վերջիններիս մասնագիտական որակնեն ու գիտելիքները բարելավելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրականություն

1. Ասատրյան Լ., «Մանկավարժություն», Երևան, 2017:
2. Գաբրիելյան Մ., «Հայկական ընտանիքն անցումային շրջանում», Երևան, 2005:
3. Թադևոսյան Գ., «Հայ ընտանիքը սոցիալական փոփոխությունների արդի փուլում», Երևան, 1999:
4. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», Երևան, 2007:
5. Берн Ш., «Гендерная психология», Москва, 2001.
6. Гаспарян Ю., «Семья на пороге XXI века (социологические проблемы)», СПб., 1999.
7. Гидденс Э., «Современная социологическая теория», Москва, 2000.
8. Гидденс Э., «Социология», Москва, 1999.
9. Гребенников И., «Основы семейной жизни», Москва, 1991.
10. Джери Д., «Большой толковый социологический словарь», Москва, 1999.
11. Ермолаева М., «Психология зрелого и позднего возрастов в вопросах и ответах», Москва, 2004.
12. Журавлев А., «История разработки проблемы психологии зрелости» // Феномен и категория зрелости в психологии, Москва, 2007.
13. Захаров А., «Психологические особенности диагностики оптимизации взаимоотношений в конфликтной семье» // Вопросы психологии., СПб., 2007.
14. Зацепин В., «О жизни супружеской», Москва, 1978.
15. Кузнецова М., «Молодая семья и ее социальная защита в современном обществе. Социальная работа с семьей», Москва, 1995.
16. Навайтис Г., «Семья и психолог», Калининград, 1996.
17. Сысенко В., «Супружеские конфликты», Москва, 1989.
18. Черняк Е., «Социология семьи», Москва, 2004.
19. Шнейдер Л., «Психология семейных отношений», Москва, 2010.

Համացանցային ռեսուրսներ

20. ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, «ՀՀ Սահմանադրություն» – https://www.president.am/hy/constitution-2015/ (բացված՝ 18. 08. 2022)

21. Татарова Г., «Методология анализа данных в социологии» – www.socioline.ru/node/835 (բացված՝ 20. 08. 2022)